Հաստատում եմ՝
«Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարան» հիմնադրամի
ռեկտոր՝ Ռ. Ռ. Սահակյան

«23» սեպտեմբերի 2020թ.

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐԾԻՔ

Ասյա Արթուրի Սիմոնյանի

ԺԳ.00.02 – «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (Ֆիզիկական կուլտուրա) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված՝ ***«Մանկավարժական բուհերի ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկան»*** թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը և սեղմագիրը քննարկվել են ՎՊՀ-ի «Արվեստի և սպորտի» և «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնների 17.09.2020թ. համատեղ նիստում (արձանագրություն թիվ 2):

Նիստին մասնակցում էին՝ «Մանկավարժության և հոգեբանության» ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ ***մ.գ.թ., դոցենտ Լ. Բաղդասարյանը***, «Արվեստի և սպորտի» ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ ***մ.գ.թ., դոցենտ Վ.Նազարյանը***, ամբիոնի դասախոսներ՝ **մ.գ.դ., պրոֆեսոր**՝ Պ.Գևորգյանը, մ.գ.դ., **պրոֆեսոր**՝ Վ.Ղարագյոզյան, **մ.գ.թ., դոցենտներ**՝ Ա.Բարսեղյան, Զ.Գրիգորյանը, Ս.Բեժանյանը, Ա.Հովհաննիսյանը, Ա.Հարությունյանը, Ք.Վիրաբյանը, **հ.գ.թ., դոցենտներ**՝ Հ.Ավագիմյանը, Ա.Ղազարոսյանը, Ն.Կոստանդյանը, Վ.Միրզոյանը, Մ.Շահվերդյանը, **դոցենտներ**՝ Զ.Էվոյան, Հ.Սարգսյան, Գ.Շահվերդյան, Մ.Նուրիջանյան, Հ.Հակոբյան, Մ.Պողոսյան, Ռ.Հեքիմյան, Հ.Չատինյան, Ս.Հարությունյան, Թ.Մելիքյան, Ռ.Ամիրբեկյան, Կ.Երիցյան, **տեխն.գ.թ.** Մ.Վիրաբյան, **ասիստենտներ**՝ Ս.Բարսեղյան, Ն.Պապանյան, Ն. Ներկարարյանը, Լ. Մարուքյանը, մ.գ.թ.՝ Լ. Դանիելյանը, **դասախոսներ**՝ Տ.Մալումյանը, Ա.Խաչատրյանը, Մ.Մկրտչյան, Վ.Ազարյան, Գ.Վարդանյան, Մ.Մեսրոպյան, Մ.Սիրադեղյան, Ն.Վարդանյան, Գ.Մինասյան, Ա.Հովհաննիսյան, Վ.Շահբազյան, Ս.Փոթինյան:

Հայտնի է, որ ֆիզիկական կուլտուրան կոչված է ապահովելու առողջության պահպանումը, հոգևոր և ֆիզիկական ուժերի ձևավորումը, շարժողական ներուժի

մակարդակի բարձրացումը և համամարդկային արժեքների ձեռքբերումը:

Բուհում պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստությունը հանդիսանում է ուսանողների պատրաստության կողմերից մեկը, որն առավելապես ուղղված է իրենց մասնագիտական պարտականությունների անմիջական կատարմանը, այդ թվում նաև մանկավարժական աշխատանքում՝ նպաստելով ապագա ուսուցչի հասարակական և աշխատանքային ակտիվությանը, սոցիալ-մասնագիտական կայացմանը:

Հեղինակը՝ գիտամեթոդական գրականության և գործնական բազմակողմանի ուսումնասիրությունների հիման վրա փաստում է, որ մեր հանրապետությունում դեռևս ոչ բավարար ուշադրություն է հատկացվում մանկավարժների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության իրագործման հարցերին, իսկ ՇՊՀ-ի օրինակով ատենախոսը ցույց է տալիս, որ դեռևս ոչ բավարար մակարդակով է իրագործվում ուսանողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստությունը, ըստ էության նրանց մեծամասնության ֆիզիկական կուլտուրայի մակարդակը թույլ չի տալիս իրականացնել լիարժեք ֆիզկուլտուրային-սպորտային գործունեություն:

Այս պարագայում անհրաժեշտություն է առաջանում վերանայել բուհերում ապագա մանկավարժների ֆիզիկական դաստիարակության գործընթացը, ճշգրտել նրանց պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության բովանդակությունը և կառուցվածքը, ֆիզիկական դաստիարակության միջոցները և կազմակերպչա-մեթոդական մոտեցումները, ինչով և պայմանավորվում է տվյալ թեմայի արդիականությունը, նրա գիտական, տեսական և գործնական նշանակությունը:

Ա. Սիմոնյանը, նպատակ է դրել մշակել և փորձարարական ճանապարհով հիմնավորել մանկավարժական բուհի ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկան:

Ատենախոսությունը շարադրված է համակարգչային 141 էջերում, այն բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածներից, ներդրման ակտից:

Հեղինակն իր հետազոտության արդյունքները ներդրել է Շիրակի պետական համալսարանի Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի աշխատանքներում, ներկայացրել է հանրապետական գիտամեթոդական կոնֆերանսներում, տպագրել է գիտական հոդվածներ հայրենական և միջազգային

ամսագրերում ու գիտական ժողովածուներում:

Ներածության մեջ հեղինակը հիմնավորել է թեմայի արդիականությունը, ներկայացրել է հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, գիտական վարկածը, խնդիրները, օգտագործված մեթոդները և գիտական նորույթը, ատենախոսության տեսական և գործնական նշանակությունները, պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները:

Կատարված աշխատանքները կարևոր տեսական և կիրառական նշանակություն ունեն բարձրագույն ֆիզկուլտուրային կրթության համակարգում, ապագա մանկավարժների մասնագիտական պատրաստության գործընթացում: Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել նաև Հայաստանի այլ բուհերի (մանկավարժական) ուսանողուհիների ֆիզիկական դաստիարակության գործընթացում, բուհական «Ֆիզիկական դաստիարակություն» առարկայի աշխատանքային ծրագրերի մշակման ժամանակ:

Ատենախոսության առաջին գլխում, Ա. Սիմոնյանը, ժամանակակից գիտական աղբյուրների վերլուծության արդյունքում նորովի է ուսումնասիրել երիտասարդների կրթության և դաստիարակության գործընթացում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերը, բուհերում հիմնախնդրի էությունը և վիճակը, մանկավարժական բուհերի ուսանողների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստությանն առնչվող հարցերը, նրանց ՊԿՖՊ բովանդակային հիմունքները՝ ուրվագծելով հետազոտության հետագա ընթացքը:

Վերլուծելով գրական աղբյուրները, պարզել է, որ մասնագետները տարբեր տարիներին, որպես մանկավարժի կարևոր մասնագիտական որակներ, առանձնացրել են՝ ուշադրության կենտրոնացումը, այն ժամանակի մեջ կենտրոնացնելու և բաշխելու հնարավորությունները, տարածական մտածողությունը, իսկ առաջատար շարժողական ընդունակություններից՝ մանր մոտորիկան, շարժումների կոորդինացիան, կարևորել են ֆիզիկական պատրաստվածության բարձր մակարդակը, որպես օրգանիզմի աշխատունակության ապահովման նախապայման:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակը ներկայացրել է 18-20 տարեկան ուսանողների ֆիզիկական զարգացման (մարմնի հասակ և քաշ) ու շարժողական պատրաստվածության (արագաշարժություն, դիմացկունություն, արագաուժային ընդունակություններ, դաստակի մկանային ուժ, ստորին վերջույթների ուժային

դիմացկունություն) մոնիթորինգի արդյունքների վերլուծությունը:

Հայցորդը մշակել է ապագա մանկավարժների ֆիզիկական զարգացման և շարժողական պատրաստվածության գնահատման մոդելային սանդղակներ և մանկավարժության բակալավրի մասնագիտական պրոֆեսիագիրը, որտեղ ներկայացրել է մասնագիտության առանձնահատկությունները և բովանդակային նկարագիրը, աշխատանքային պայմանները և բժշկական հակացուցումները, ուսուցչի անձին ներկայացվող պահանջները (մանկավարժական, անձնային, հոգեկան, շարժողական, ֆիզիոլոգիական) և մասնագիտական կոմպետենցիաները:

Ատենախոսության երրորդ գլխում ատենախոսը ներկայացրել է մանկավարժների և ուսանողների սոցիոլոգիական հարցումների արդյունքները, որպես առաջադրված գիտական վարկածի հիմնավորման նախադրյալներ, վեր են հանվել առկա բացթողումները և պարզվել են մանկավարժների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության հիմնական խնդիրները:

Ա. Սիմոնյանն իր ուսումնասիրությունների արդյունքում մշակել է մանկավարժական բուհերի ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության կատարելագործման ծրագրի մեթոդիկան:

Կարևորվում է, որ ատենախոսը ընտրել և տեղայնացրել է ապագա ուսուցիչների մասնագիտական գործունեության համար կարևոր շարժողական ընդունակությունների, հոգեֆիզիկական որակների և ֆունկցիոնալ վիճակի ցուցանիշների ձևավորմանը նպաստող ֆիզիկական դաստիարակության միջոցները, որոնց հիման վրա մշակվել են ֆիզիկական վարժությունների թվով 10 համալիրներ:

Գիտափորձարարական աշխատանքների արդյունքում հեղինակին հաջողվել է հիմնավորել՝ մանկավարժական բուհերի ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկակական պատրաստության մեթոդիկայի արդյունավետությունը, ինչն ապացուցվել է փորձարարական խմբում՝ համեմատած ստուգողական խմբի, արձանագրված հավաստի դրական տեղաշարժերով՝ թեստավորված բոլոր ցուցանիշների համար, ինչպես նաև տվել է գործնական երաշխավորություններ հեղինակային մեթոդիկայի անցկացման վերաբերյալ:

Վերլուծելով ատենախոսությունը՝ հարկ ենք համարում նշել հետազոտության արժեքավոր կողմերը.

□ հեղինակի կողմից կատարվել է ուսումնասիրվող հիմնահարցի շուրջ

ժամանակակից գրական աղբյուրների խորը վերլուծություն, ինչը թույլ է տվել բացահայտել առկա խնդիրները և առաջադրել դրանց լուծման ուղիները՝ կիրառելով գիտական հետազոտության արդի մեթոդների լայն շրջանակ,

- ֆիզիկական դաստիարակության պրակտիկայում առաջին անգամ ուսանողուհիների՝ ապագա ուսուցիչների համար, մշակվել է ֆիզիկական վիճակի գնահատման մոդելային սանդղակներ և ներկայացվել է մանկավարժության բակալավրի պրոֆեսիագիրը,
- մանկավարժական բուհերի ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության համար մշակված մեթոդիկան և տրված գործնական երաշխավորությունները լրացնում են բուհում ապագա մանկավարժների մասնագիտական պատրաստության գործընթացը:

Դրական գնահատելով կատարված հետազոտությունը և կարևորելով ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը, հարկ ենք համարում նշել որոշ դիտողություններ.

- աշխատանքում հեղինակը նշում է պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության իրագործման մանկավարժական պայմանների մասին, սակայն ցանկալի է, որ պարզաբանվեր, թե որոնք են այդ պայմանները,
- ձևավորող մանկավարժական գիտափորձը տևել է 1,5 ուսումնական տարի, առավել արդյունավետ կլիներ անցկացնել 2 ուսումնական տարվա ընթացքում,
- 13-18 աղյուսակներում ամփոփված մանկավարժական գիտափորձի արդյունքները նախընտրելի կլիներ ներկայացնել մեկ ընդհանրական աղյուսակի տեսքով,
- 15-17 տրամագրերում տրված գիտափորձի ավարտին փորձարարական և ստուգողական խմբերի միջև շարժողական պատրաստվածության, հոգեֆիզիկական որակների և ֆունկցիոնալ վիճակի տեղաշարժերի համեմատությունները նախընտրելի է, որ ամփոփվեն նաև աղյուսակով, իսկ եզրակացություններում (6.1 կետ) տեղաշարժերը անգամով գրելու փոխարեն կարելի է նշել փաստացի թվերով,
- հավելված 6-ում, թիվ 2-10 համալիրների 3-րդ կետում տրված բեռնվածության չափավորումը, մեր կարծիքով, չէր կարող ապահովել եզրակացությունների 6.1 կետում նշված ընդհանուր դիմացկունության ցուցանիշների 7 անգամ աճը փորձարարական խմբի մոտ,
- ցանկալի կլիներ, որ հեղինակը իր հետազոտության հիման վրա պատրաստեր

մեթոդական ձեռնարկ մասնագետների համար:

Սակայն վերոնշյալ դիտողությունները ամենևին չեն նվազեցնում աշխատանքի բարձր գնահատականը, այն կատարված է պատշաճ գիտական մակարդակով և համապատասխանում է ատենախոսական աշխատանքի կատարմանը ներկայացվող պահանջներին: Սեղմագիրը և հրատարակված հոդվածները համապատասխանում են ատենախոսությանը, լիովին արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության թեմայի արդիականությունը, նրա գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, ինչպես նաև, ստացված արդյունքների ու եզրակացությունների հավաստիությունը և հիմնավորվածությունը, հիմք են հանդիսանում փաստելու, որ Ասյա Արթուրի Սիմոնյանի ***«Մանկավարժական բուհերի ուսանողուհիների պրոֆեսիոնալ-կիրառական ֆիզիկական պատրաստության մեթոդիկան»*** թեմայով ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն գիտական աշխատանք է, ունի կարևոր տեսական և կիրառական նշանակություն, համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և ԺԳ.00.02 - «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (ֆիզիկական կուլտուրա) մասնագիտական թվանիշին, իսկ նրա հեղինակն արժանի է մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Արվեստի և սպորտի ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ / /

մ.գ.թ., դոցենտ՝ Վ. Ռ. Նազարյան

Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչի պաշտոնակատար՝ / /

մ.գ.թ., դոցենտ՝ Լ. Գ. Բաղդասարյան

Ստորագրությունները հաստատում եմ՝ ՎՊՀ գիտ. քարտուղար՝ / /

մ.գ.թ., դոցենտ՝ Ս. Բեժանյան

«03» 09 2020թ.